ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2027

Ներածություն

Astra հիմնադրամը ստեղծվել է 2022 թվականին մի խումբ կանանց կողմից, ովքեր կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի ավելի քան 20 տարվա փորձառություն ունեն: Մեր նպատակն է վերջ տալ կանանց և երեխաների նկատմամբ բռնությանը՝ կատարելագործելով առկա մեխանիզմները և իրականացնելով կանխարգելման ծրագրեր: Հիմնադրամի աշխատանքներն իրականացվում են Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի ցածր և միջին եկամուտ ունեցող բնակչությամբ երկրներում: Աշխատակիցների մեր թիմը նվիրված է այս առաքելությանը և ներառում է սոցիոլոգներ, հոգեբաններ, հետազոտողներ և պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետներ: Ռազմավարական այս փաստաթուղթը ուրվագծում է մեր առաքելությանը հասնելու նպատակով մշակված նպատակներն ու նախաձեռնությունները գալիք հինգ տարիների համար (2023–2027):

Տեսլականը

Astra հիմնադրամը ձգտում է այնպիսի հասարակության կայացման, որտեղ կանայք և երեխաները պաշտպանված են բռնության բոլոր ձևերից և որտեղ նրանց հասանելի կլինի հոգեբանական, բժշկական, իրավական և սոցիալական համապարփակ աջակցություն:

Առաքելությունը

Astra հիմնադրամը նպատակ ունի խթանել կանանց և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և հակազդման գիտական մոտեցումը, ինչպես նաև նպաստել նրանց առողջության և բարեկեցության բարելավմանը: Մենք դա անում ենք՝ իրականացնելով թիրախային հետազոտություններ, մեծացնելով համագործակցության հնարավորությունները, կազմակերպելով վերապատրաստման պրակտիկ դասընթացներ և իրականացնելով կանխարգելման ապացուցահեն ծրագրեր:

Մեր նպատակներն ու ռազմավարությունը

Նպատակ 1: Ապացույցների հիմնավոր բազայի բարելավում

- Կովկասում և Կենտրոնական Ասիայում կանանց և երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ հետազոտությունների ֆինանսավորման ռեսուրսների ներգրավում;
- Բռնության բնույթի, տարածվածության և հետևանքների մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար առաջադեմ հետազոտությունների անցկացում;
- Իրականացված հետազոտության արդյունքների տարածում՝ նպաստելու համար կանխարգելման և արձագանքման արդյունավետ ռազմավարությունների առավել լավ ըմբռնմանը;
- Հետազոտության արդյունքների հիման վրա գործնական առաջարկությունների մշակում՝ կանանց և երեխաների նկատմամբ բռնությունը կանխարգելելու և նման դեպքերին արձագանքելու ուղղությամբ:

Նպատակ 2: Մասնագիտական կարողությունների ամրապնդում

- Քաղաքականություն մշակողների և պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետների կարողությունների ամրապնդում՝ հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավման համար, այդպիսով ապահովելով հետազոտության արդյունքների վերակերպումը արդյունավետ քաղաքականության և ծրագրերի;

- Մեթոդաբանական ռեսուրսների ստեղծում և համօգտագործում՝ մեթոդաբանորեն հիմնավորված, ներառական, տրավմայի վերաբերյալ իրազեկ և գենդերային զգայուն հետազոտությունների իրականացմանը խթանելու համար;
- Քաղաքականության մշակման և ծրագրերի նախագծման ընթացքում հետազոտությունների կարևորության վերաբերյալ որոշումներ կայացնողների գիտելիքների ամրապնդում:

Նպատակ 3: Գործընկերության ընդլայնում

- Կազմակերպությունների և մասնագետների միջև գործընկերական նոր կապերի ստեղծում՝ ոլորտը զարգացնելու, տեղեկատվության և ուսուցման փոխանակման հնարավորություն տալու, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների և արձագանքման ազդեցությունը մեծացնելու համար;
- Գիտաժողովների, սեմինարների և հանդիպումների միջոցով հետազոտողների, քաղաքականություն մշակողների, պրակտիկ գործունեություն ծավալողների և ֆինանսավորողների միջև համագործակցության խթանում, նպաստելով բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությանը կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարում:

Նպատակ 4: Երեխաների համար անվտանգ տարածքի ստեղծում

- Մանկական հաստատություններում բռնության և այլ անընդունելի վարքագծի կանխարգելման և դրանց արձագանքման կարևորության վերաբերյալ ղեկավարների, անձնակազմի անդամների, ծնողների և ուսուցիչների իրազեկման և ընկալման խթանում;
- Մանկական հաստատություններում բռնության և այլ անընդունելի վարքագծի կանխարգելմանը, բացահայտմանը և արձագանքմանն ուղղված գործնական ընթացակարգերի՝ «Երեխաների անվտանգության ապահովման մոտեցումների» մշակման և իրականացման հարցում կազմակերպություններին աջակցության տրամադրում:

Ակնկալվող արդյունքները

Նպատակ 1: Ապացույցների հիմնավոր բազայի բարելավում

- Բռնության կանխարգելման և հակազդման վերաբերյալ թիրախային և նորարարական հետազոտությունների թվի ավելացում՝ կիրառելով հետազոտական փորձված մոտեցումներ;
- Կանանց և երեխաների նկատմամբ բռնության հետազոտության համար ֆինանսավորման ավելի մեծ հասանելիություն;
- Բռնության կանխարգելման և արձագանքման վերաբերյալ ապացուցահեն մոտեցումների վերաբերյալ իրազեկման և դրանց ընկալման ամրապնդում պրակտիկ գործունեություն ծավալողների և քաղաքականություն մշակողների շրջանում։

Նպատակ 2: Մասնագիտական կարողությունների ամրապնդում

- Բռնության կանխարգելման և արձագանքման միջամտությունները մշակելու, իրականացնելու և գնահատելու գործում հետազոտողների, պրակտիկ գործունեություն ծավալողների և քաղաքականություն մշակողների շրջանում թիրախային հետազոտական մեթոդների կիրառման առավել արդյունավետ կարողություններ;
- Շահագրգիռ կողմերի միջև գիտելիքների և ռեսուրսների փոխանակման և համագործակցության ակտիվացում։

Նպատակ 3: Գործընկերության ընդլայնում

- Բռնության կանխարգելման և արձագանքման ուղղությամբ աշխատող կազմակերպությունների և ծրագրերի միջև համագործակցության և գիտելիքների փոխանակման ակտիվացում;
- Համատեղ նպատակների ուղղությամբ ջանքերի առավել հիմնավորված դասակարգում և համակարգում;
- Տարբեր շահագրգիռ կողմերի միջև համագործակցության նորարարական մեթոդների զարգացում։

Նպատակ 4: Երեխաների համար անվտանգ տարածքի ստեղծում

- «Երեխաների անվտանգության ապահովման մոտեցումները» որդեգրած մանկական հաստատությունների թվի ավելացում, ինչը կհանգեցնի երեխաների և դեռահասների համար ավելի անվտանգ միջավայրի կայացմանը;
- Մանկական հաստատություններում բռնությունների և այլ անընդունելի վարքագծի կանխարգելման և դրանց արձագանքման կարևորության մասին ղեկավարների, անձնակազմի անդամների, ծնողների, ուսուցիչների և դաստիարակների շրջանում առավել համապարփակ իրազեկում և ընկալում;
- Բռնությունները և այլ անընդունելի վարքագիծը բացահայտելու և արձագանքելու հմտությունների ամրապնդում ղեկավարների և անձնակազմի անդամների շրջանում՝ գործնական դասընթացների և վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով:

Գերակա սկզբունքներ

1. Ապացուցահեն մոտեցում. մենք հիմք ենք ընդունում թիրախային հետազոտությունները և գնահատումները՝ հասկանալու եւ արձագանքելու կանանց եւ երեխաների նկատմամբ բռնությունը, ինչպես նաև նպաստելու հոգեկան առողջության ամրապնդմանը:
2. Առողջապահության ընդգրկուն մոտեցում. մենք աշխատում ենք կանանց եւ երեխաների առողջությանն ու բարեկեցությանը նպաստելու ուղղությամբ՝ գիտակցելով, որ առողջապահական համապարփակ և ընդգրկուն ծառայությունների հասանելիությունը մարդու հիմնարար իրավունքներից է:
3. Կանխարգելման առաջնահերթություն. մեր ջանքերն ուղղված են կանխարգելման ապացուցահեն այնպիսի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, որոնք նվազեցնում են բռնության ռիսկը:
4. Գործընկերական մոտեցում. մեր նպատակներին հասնելու համար մենք աշխատում ենք շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ, որը ներառում է պետական կառույցները, ՀԿ-ները, համայնքային կազմակերպությունները, ակադեմիական հաստատությունները և այլ օղակներ:

5. Գենդերային զգայունություն. մենք կարևորում ենք կանանց և աղջիկների փորձառության ու կարիքների առանձնահատկությունները և նպաստում ենք գենդերային հավասարությանն ու հնարավորությունների բացահայտմանը:
6. Տրավմայի ազդեցության ընկալում. կանխարգելման և արձագանքման մեր ջանքերում մենք ունենք տրավմայի ազդեցության մասին ընկալում և գիտակցում ենք, որ բռնություն վերապրած շատ անհատներ կարող են տրավմայի ենթարկված լինել:
7. Մշակութային առանձնահատկությունների նկատմամբ զգայունություն. մենք մշակում և նախատեսում ենք այնպիսի ծրագրեր և ծառայություններ, որոնք համահունչ են տարածաշրջանի իրականությանը և մշակութային նորմերին և հաշվի ենք առնում այն համայնքների առանձնահատկությունները, որտեղ աշխատում ենք:
8. Իրավունքահեն մոտեցում. մենք ընդգծում և պաշտպանում ենք կանանց և երեխաների իրավունքները՝ կարևորելով նրանց արժանապատվությունն ու դերը:
9. Մասնագիտական կարողությունների ամրապնդում. մենք զարգացնում ենք անհատների, կազմակերպությունների և համայնքների կարողությունները՝ կանխելու կանանց եւ երեխաների նկատմամբ բռնությունը և խթանելու հոգեկան առողջությունը, տրամադրելով ուսուցում և տեխնիկական աջակցություն՝ կանխարգելման ապացուցահեն ծրագրերի եւ ծառայությունների համար: